

բայերի հարակատար ձևերը շեշտված կերպով պահպանում են գործողության ժամանակային հասկացությունները և պետք է մնան հարացույցում (կանգնած են, ես, է, էի, էիր, էր, նրանում է, որ «երեխեքը քնած են (ինչո՞ւ ոչ երեխաները քնած են) կարելի է վերածել «քնած երեխեքի», շնկատելով, որ դրանք բնավ հավասար չեն և բոլորովին այլ բաներ են ցույց տալիս: «Երեխեքը քնած են» նշանակում է նրանք սկսել են մի վիճակ, որ հարատևում է մինչև խոսողի ներկան, միշտ «քնած երեխեքը» նշանակում է պարզապես քնած վիճակի հատկանիշ ունեցող երեխաներ:

Բայի սեռի հարցում հեղինակը փորձում է մնալ ձևերի աշխարհում, ուստի սեռը որոշում է «վ» ածանց ունենալու և չունենալու հատկանիշով: Բայց ի վերջո ընդունում է նաև շեղոր սեռ, անվանելով այն անանցողական բայա-

կարգ: Ըստ էության, նա այստեղ փորձում է բայի անցողականությունն ու սեռը միավորել, որ մասամբ հաջողվում է: Սակայն ձևական ելակետը նրան զցում է շփոթության մեջ: Այսպես՝ հոգ ժառանգությունը նետվեց ջուրը, կալույթըր նետվեց ջուրը նախադասությունների մեջ առաջին նետվեց ձևը, հեղինակի տեսության համեմատ, իրոք որ կրավորական է, իսկ երկրորդ նետվեց ձևը մի ինչ-որ այլ բան է: Նա հասկանում է, որ սա անդրադարձ սեռի բայած է, բայց աշխատում է իր համար տհաճ այդ երևույթից ազատվել և չի կարողանում: Բայց մեր լեզվի մեջ երկրորդ նետվեց ձևն այժմ խիստ տարածում է գտել և նրանից հրաժարվելով՝ հարցը գիտականորեն չի լուծվում:

Բայի վերլուծության բաժնում կան ոչ քիչ թվով մասնակի այլ թերություններ:

ՀԱՅԿ ԳԱ ակադեմիկոս Ա. ՂԱՐԻՅԱՆ

·I. E. KAPAGIANNOPOLLOS, Πηγαί τῆς Βυζαντινῆς Ἱστορίας, Β' ἔκδοσις, Ἱερσάλωνιχ, 1971, 555 σελ. (Ի. է. Կափաօնոփոլոս, Բյուզանդական պատմության աղբյուրները, II հրատ., Սալոնիկ, 1971, 555 էջ):

Գրախոսվող ուսումնասիրությունը Սալոնիկի «Բյուզանդական հետազոտությունների կենտրոնի» (Κέντρον Βυζαντινῶν Ἑρευνῶν) «Բյուզանդական բնագրեր և ուսումնասիրություններ» (Βυζαντινα ἑρευνᾶ καὶ μελέται) մատենաշարի երկրորդ գիրքն է: Բյուզանդիայի պատմության մեջ զբաղվող մասնագետների համար գրքի ունեցած արժեքի և կարևորության մասին վկայում է այն փաստը, որ իր լույս տեսնելու հաջորդ տարին այն վերահրատարակվել է (գրքի առաջին հրատարակությունը լույս տեսավ նույն տեղում, 1970 թ.): Երկրորդ հրատարակությունը տարբերվում է առաջինից իր ընդգրկած նոր նյութով, որ տրված է գրքի վերջում որպես լրացում:

Բյուզանդիայի պատմության մեջ զբաղվող մասնագետը բյուզանդագիտության այլ ճյուղերի մասնագետի համեմատությանը գտնվում է ավելի լավ վիճակում այն պատճառով, որ նրա տրամադրության տակ կան մատենագիտական մի շարք արժեքավոր ձեռնարկներ: Մինչև օրս էլ նրա սեղանի գիրքն է համարվում Կ. Կրումրախերի հայտնի «Geschichte der Byzantinische Literatur» (München, 1897, արգրորդ հրատարակություն): Հետագայում լույս են տե-

սել այդ տիպի մի քանի գրքեր ևս, ինչպես օրինակ, հունգարացի բյուզանդագետ Դ. Մորավսիկի երկհատոր աշխատությունը (Gy. Moravcsik, Byzantinoturcica. Die byzantinischen Quellen der Geschichte der Türk-völker, Zweite durchgearbeitete Auflage Berlin, 1958. առաջին հրատարակությունը լույս է տեսել Բուդապեշտում 1942—1943 թթ.): Այն վերաբերում է թյուրքական ժողովուրդների մասին խոսող բյուզանդական հեղինակներին (ավելորդ չէ նշել, որ բյուզանդական հեղինակների մեծամասնությունը գրել է այդ ժողովուրդների մասին): Եվ, վերջապես, Մ. է. Կոլոննայի աշխատությունը «Gli storici bizantini dal IV al XV secolo. I. Storici profani, Napoli, 1956», որը թեև հիմնված է Դ. Մորավսիկի գրքի վրա, բայց բովանդակում է ըստի աշխարհիկ հեղինակներին՝ անկախ այն բանից, խոսում են նրանք թյուրքական ժողովուրդների մասին, թե ոչ: Վերոհիշյալ բոլոր երկերը լիակատար կերպով մատենագիտական տեղեկություններ են տալիս հեղինակի և նրա գործի մասին, նրա երկի՝ առկա ձեռագրերի մասին, հիշում են գոյություն ունեցող հրատարակությունները, այն հրատարակությունը, որից

պետք է ուսումնասիրողը օգտվի և, վերջապես, այդ հեղինակի ու նրա գործի մասին եղած գրականությունը: Այդ երկերը պատասխան են տալիս այն հարցին, թե ո՞վ է տվյալ հեղինակը և ո՞րն է նրա գործը, բայց պատասխան չեն տալիս մի այլ կարևոր հարցի՝ տվյալ դարի բյուզանդական պատմության ուսումնասիրության համար մենք ինչպիսի՞ աղբյուրներ ունենք: Ի. Կարայաննուպուլոսի գիրքն, ահա, պատասխան է տալիս այդ հարցին ևս: Պետք է ընդգծել նաև, որ Կրումբախերը, Մորավչիկն ու Կոլոննան իրենց ուշադրությունը բեռնել են պատմողական աղբյուրների վրա, այնինչ Կարայաննուպուլոսը կանգ է առնում նաև վերջին ժամանակաշրջանում մեծ զարգացում ապրող բյուզանդական դիպլոմատիկայի, արձանագրագիտության, կնքագիտության, դրամագիտության և բյուզանդական շրջանի պապիրուսների վրա, որոնք մեծ արժեք ունեն հատկապես երկրի ներքին կյանքն ուսումնասիրելու համար:

«Ընդհանուր ներածության» մեջ (էջ 19—25) Կարայաննուպուլոսը կանգ է առնում «աղբյուրներ» հասկացողության և բյուզանդական աղբյուրների դասակարգման վրա: Նա աղբյուրները բաժանում է երեք մասի. 1. «Կատարված դեպքեր», 2. «Հուշարձաններ», 3. «Բնագրեր»: «Կատարված դեպքեր» հասկացողության մեջ հեղինակը նկատի ունի լեզուն, երաժշտությունը, հատուկ անունները, տեղանուններն ու բարբառները: «Հուշարձաններ» հասկացողության տակ նկատի են առնվում «Մեծ արվեստը», որ ենթաբաժանվում է «Ճարտարապետության» ու «Նկարչության» և «Փորրարվեստը»՝ մանրանկարչություն, մանրաքանդակ (միկրոպլաստիկա—փղոսկր, սմալտա, ոսկերչություն, արծաթագործություն) և ջուլհակագործություն: Ամենամեծ բաժինը՝ «Բնագրեր», ունի երկու ենթաբաժին.

I. Զեռագիր աղբյուրներ, որոնք ընդգրկում են՝ 1. պատմողական բնագրեր. պատմական, աստվածաբանական, սրբաբանական, բանասիրական, 2. փաստաթղթեր, որոնց տակ նկատի են առնվում հասարակական, քաղաքական (կայսերական, իշխանական, գրասենյակային), եկեղեցական (պատրիարքական, եպիսկոպոսական, ժողովական, սբ. Աթոնի), մասնավոր, 3. գործնական նշանակություն ունեցող բնագրեր (իրավագիտական, բժշկական-անասնաբուժական, մաթեմատիկական- աստղաբաշխական -բնագիտական, երկրագործական-բուսաբանական-հանքաբանական, ռազմական արվեստի):

II. Արձանագրագիտական աղբյուրներ (վիմական արձանագրություններ, դրամներ, կնիքներ):

Առաջին մասում (էջ 27—80) մանրամասն խոսվում է «Ներածականում» առաջ քաշված

հարցերի մասին, տրվում դրանց մասին եղած մանրամասն մատենագիտությունը: «Ներկրորդ մասը» աշխատության հիմնական բաժինն է (էջ 81—413), որտեղ դար առ դար, սկսած IV դարից և վերջացրած XV-ով, տրվում են տվյալ դարին վերաբերող բազմազան աղբյուրները: Օրինակ, IV դ. աղբյուրների մասին առանձին վերնագրի տակ տրվում են՝ 1. ժամանակակից (IV դ.) աղբյուրները, 2. հետագա դարերի աղբյուրները, որոնց բովանդակությունը, սակայն, վերջանում է IV դ. դեպքերի նկարագրությամբ, 3. հետագա շրջանի աղբյուրները, որոնց մեջ թեև IV դ. վերաբերող նյութ կա, բայց նրանց բովանդակությունը X դարից էլ է անցնում: Վերջին դեպքում պարզապես հղում է տրվում (դար առ դար) այդ հեղինակների ապրած դարին վերաբերող բաժնին, ցույց տալով յուրաքանչյուրի հերթական համարը: Իմ այդպես մինչև XV դարը ներառյալ: Յուրաքանչյուր աղբյուրի վերաբերյալ տրվում է. 1. հեղինակի համառոտ կենսագրությունը, նրա աշխատությունները, 2. տվյալ երկի հրատարակությունը, 3. երկի հեղինակի օգտագործած աղբյուրները, 4. այդ երկի հետագայում ու հեղինակի համար աղբյուր ծառայելը, 5. աղբյուրի գնահատականն ու արժեքավորումը: Պատմողական աղբյուրներին հաջորդում են եկեղեցական ժողովների որոշումները, պապիրուսները, խեցիները, դրամները, կնիքները, արձանագրությունները, կայսերական ու պատրիարքական փաստաթղթերը և այլն:

Կարայաննուպուլոսի գրքի արժեքը բարձրանում է և այն հանգամանքից, որ հեղինակը բյուզանդիայի պատմությանը վերաբերող աղբյուրները քննելիս չի բավարարվում սոսկ բյուզանդականով, որտեղ նա հանդես է բերում նյութի բազմակողմանի և խոր իմացություն, այլև հիշում է այլալեզու աղբյուրները, բարձր գնահատում դրանք և այս կամ այն չափով հիշում նրանց տվյալները: Այդ աղբյուրները, նայած ժամանակին, ասորական են, հայկական, լատինական, արաբական, հրեական, սլավոնական և այլն:

Բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, նրա երկի կարևորությունն ու օգտակարությունը բյուզանդագիտությամբ և նրա հետ աղբյուրով այլ գիտություններով զբաղվող մասնագետների համար, ստորև մենք կանգ ենք առնելու զխավորապես հայագիտությանն առնչվող նյութի վրա, ենթադրելով, որ մեր դիտողությունները կարող են հեղինակին օգտակար լինել գրքի վերահրատարակության ժամանակ:

Ինչպես ասացինք, Կարայաննուպուլոսն իր աշխատությունը սկսում է IV դ. աղբյուրներից,

Հիշում այդ գարին վերաբերող բյուզանդական և այլալեզու աղբյուրները, այդ թվում նաև հայկական: Նա հիշում է Գրիգոր Լուսավորչի Վարքը, Փավստոս Բուզանդի «Պատմությունը», իսկ հետագա շրջանի հեղինակներից IV դ. համար՝ Մովսես Խորենացուն, որին թեև այստեղ համարում է V դ. հեղինակ (էջ 104), բայց § 73-ում (էջ 125) հիշում որպես VIII դ. հեղինակի, նրան վերագրում «Աշխարհացոյցը»: Այստեղ ավելորդ չէ ասել, որ Ի. Կարայաննուպուրը հայկական աղբյուրները գիտի իրենց եվրոպական լեզուներով կատարված թարգմանություններով և նրանց մասին որոշ չափով հնացած ուսումնասիրություններով: Հասկանալի է, հեղինակին այս հարցում մեղադրելը ճիշտ չէր լինի: Խոսելով Գրիգոր Լուսավորչի Վարքի (Ազարանգեղոս) մասին, նա պարզապես հիշում է Լազարի հրատարակած հունարեն թարգմանությունը, որն ընդունում է որպես բնագիր, Փավստոսին համարում է IV դ. վերջի հեղինակ, որ «Հայոց պատմությունը» հունարեն է գրել, իսկ պահպանված հայերեն բնագիրը համարում է թարգմանություն հունարեն բնագրից:

VI դ. բաժնում հետագա շրջանի հայ հեղինակներից հիշատակվում է Սեբեոսը (VII դ.) և նրա երկի այլ լեզուներով թարգմանությունները: Այստեղ պետք է նշել, սակայն, որ Հ. Հյուբշմանի «Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, aus dem Armenischen des Sebeos» (Leipzig, 1875) աշխատության մեջ տրվում է Սեբեոսի երկի ոչ ամբողջական, այլ սոսկ արաբական արշավանքների մասին յոթ գլուխների գերմաներեն թարգմանությունը: VIII դ. բյուզանդական պատմության վերաբերյալ արժեքավոր աղբյուր է Ղևոնդի երկը, որը տեղ չի գտել Կարայաննուպուրի աշխատության մեջ, թեև օտար բյուզանդագետներին մատչելի թարգմանություններ կան: IX դ. վերաբերյալ պատրիարք Փոտի երկերի (գլխավորապես նամակների) առնչությունը պետք է նշել, որ պահպանվել են նաև նրա մի շարք նամակները հայերեն թարգմանությամբ, որոնց մասին նույնպես խոսք չկա Կարայաննուպուրի գրքում: Այդ նամակները արժեքավոր են բյուզանդա-հայկական հարա-

բերությունների ուսումնասիրության համար²: Պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (X դ.) նամակների առնչությամբ պետք է ավելացնել, որ նրանք լույս են սփռում ոչ միայն բյուզանդա-բուլղարական փոխհարաբերությունների վրա, ինչպես գրում է հեղինակը, այլև բյուզանդա-հայկական: Օրինակ, նրա 101-րդ և 139-րդ նամակներն ուղղված են Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ի՝ Թագավորին³: Այստեղ պետք է նշել, որ չի նշված նաև Հովհաննես Դրասխանակերտցու գործը, որ տվյալ ժամանակաշրջանի Բյուզանդիայի պատմության համար որոշակի արժեք է ներկայացնում: Այն թարգմանվել է ֆրանսերեն⁴ և մատչելի էր հեղինակին: Նույնը կարելի է ասել նաև Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի)⁵, ինչպես և

² Տե՛ս Թեոդ. Փաւտայ Պատրիարքի առ Զաքարիայ կաթողիկոս Հայոց Մեծայր (Φωτιστο πατριάρχου επιστολή Ζαχαρία τῷ καθολικῷ τῆς Μεγάλης Ἀρμενίας...): Նաև «Պատմէն թղթոյն մեծի հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանայ իշխան» ('Επιστολή τῷ μεγάλῳ πατριάρχῳ Κωνσταντινουπόλεως Φωτίου πρὸς Ἀσσοτ τὸν ἡγεμόνα τῆς Μεγάλης Ἀρμενίας'): Պահպանվել են և նրանց պատասխանները. «Պատասխանիք թղթոյն Փոտայ դեռալ Սահակայ Հայոց վարդապետի հրամանաւ իշխանայ իշխանի» ('Ἀποκρίσις πρὸς τὴν ἐπιστολὴν Φωτίου, γραφεῖσα ὑπὸ Ἰσακ τῷ τῶν Ἀρμενίων κατηχητῶν ἢ βραταμπετῶν, κατ'ἐντολὴν Ἀσσοτ τῷ ἡγεμόνος τῆς Μεγάλης Ἀρμενίας'). «Православный Палестинский Сборник», вып. 31. СПб, 1892, էջ 179—226: Տե՛ս նաև «Գիրք թղթոյն», Թիֆլիս, 1901, էջ 279—294:

³ Այդ մասին տե՛ս. R. J. H. Jenkins, Letter 101 of the Patriarche Nicolas Mysticus, Byzantion, t. XXXI (1961), fasc. I, էջ 75—80: Նաև Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Բ թագավորին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 251—256:

⁴ «Histoire d'Arménie par le Patriarche Jean VI dit Jean Catholikos». Trad. de l'arménien en français par M. J. Saint-Martin, Paris, 1841 (վերջերս այն թարգմանվել է վրացերեն Ի. Վ. Յաղարեյշվիլու կողմից, Թբիլիսի, 1965):

⁵ «Histoire universelle par Etienne Aco-ghig de Daron, trad. de l'arménien et annotée par E. Dulaurier», I partie, Publica-

¹ «Histoire de guerres et des conquêtes des Arabes en Arménie, par l'éminent Ghevond, vardapet arménien, écrivain du huitième siècle», trad. par G. Chahnazarian, Paris, 1856: «История халифов варданета Гевонда, писателя VIII века». Перевод с армянского К. Патканяна, СПб, 1862:

Մատթեոս Ուռհայեցու գրքի մասին, որը թեև գրվել է XII դ. առաջին կեսին, բայց ունի նաև X դ. վերաբերող արժեքավոր նյութ: Օրինակ՝ միայն նա է պահպանել Հովհան Զմշկիկ կայսեր մի նամակը՝ ուղղված Աշոտ Գ թագավորին, որտեղ մանրամասն խոսում է իր արշավանքի մասին արաբների դեմ: Բյուզանդական աղբյուրներում այդ արշավանքի մասին այնքան հանգամանորեն խոսված չէ, ինչքան Ուռհայեցու մոտ պահպանված այդ նամակում: Կա Ուռհայեցու երկի ամբողջական թարգմանությունը⁶, իսկ վերոհիշյալ նամակը հրատարակվել է նաև առանձին ինչպես ֆրանսերեն, այնպես էլ ռուսերեն թարգմանությամբ⁷:

«Էպարքոսի գրքի» առնչությամբ Կարաչաննուպուլսը գրում է, որ Մ. Յա. Սյուզումովը նրա հունարեն բնագիրը հրատարակել է երկու անգամ, առաջին անգամ Սվերդլովսկում 1949 թ. («Ученые записки Свердловского гос. педагогического института, вып. VI») և երկրորդ անգամ Մոսկվայում 1962 թ.: Իրականում 1949 թ. Սվերդլովսկում լույս է տեսել «Էպարքոսի գրքի» ռուսերեն թարգմանությունը միայն, իսկ 1962 թ. Մոսկվայում՝ թարգմանությունը և հունարեն բնագիրը, հանգամանալից ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով:

XI դ. աղբյուրների շարքում հիշվում է նաև նվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.), որը հայադիտության համար մեծ արժեք է ներկայացնում: Տալով այդ կտակի գնահատականը, Կարաչաննուպուլսը գտնում է, որ «այն բովանդակում է արժեքավոր տեղեկություններ

Կոնստանդնուպոլսի արքունիքի մասին, ինչպես նաև այն վիճակի մասին, որ ստեղծվեց կայսրության արևելյան նահանգներում սելջուկների արշավանքների սկսվելուց հետո» (էջ 271): Այդ գնահատականը, սակայն, չի համապատասխանում իրականությանը: Բոյիլասի կտակում ոչ մի խոսք չկա Կոնստանդնուպոլսի արքունիքի մասին, ոչ էլ սելջուկների արշավանքների սկսվելուց հետո Բյուզանդիայի առևելքում ստեղծված վիճակի մասին: Կտակը զուտ անձնական բովանդակություն ունի, այնտեղ պարզապես խոսվում է Բոյիլասի՝ արևելքում (Կղարջքում) հաստատվելու, նրա ձեռք բերած կալվածների, իր ու տեղական կառավարչի փոխհարաբերությունների, իր ունեցած շարժական ու անշարժ գույքի, ծառաների ու աղախիների, ժառանգություն թողած իր գյուղերի, դրամի, գրքերի մասին և այլն:

XI դ. աղբյուրների շարքում չի հիշատակված ոչ Ասողիկի երկը, որի մասին խոսք եղավ վերևում, ոչ էլ Արիստակես Հաստիվերտցու «Պատմությունը», որ տվյալ ժամանակաշրջանի Բյուզանդիայի պատմության համար ամենակարևոր աղբյուրներից մեկն է հանդիսանում⁸: Նույնը պետք է ասել նաև Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» վերաբերյալ: XI դ. բյուզանդական պատմության աղբյուր ծառայող բյուզանդական արձանագրություններից բացի, Կարաչաննուպուլսը հիշում է և բուլղարական արձանագրություններ, բայց, դժբախտաբար, ոչ մի խոսք չի ասում Հայաստանում գտնվող և բյուզանդական պատմությանն առնչվող հայերեն ու հունարեն արձանագրությունների մասին: Խոսքը նախ և առաջ բյուզանդական տիրապետության շրջանից հասած երեք վիժազիր արձանագրությունների մասին է, այն է՝ Հայաստանի և Իբերիայի կատապան Հովհաննես Մոնաստիրիոտեսի (1059 թ., հունարեն), Անիի բյուզանդական կառավարիչ Ահարոն Բուլղարի և Արևելից կատապան Բագարատ Վիսկացու⁹: Բացի այդ, որոշ արժեք են

tions de l'Ecole des Langues Orientales vivantes, XVIII, Paris, 1883: (Երկրորդ մասի ֆրանս. թարգմանությունն իրականացրել է Ֆ. Մակլերը և հրատարակել Փարիզում 1917 թ.), «Всёобщая история Степаноса Таронского, Асохика по прозванию, писателя XI в., перевод Н. Эммина, Москва, 1864.

⁶ «Chronique de Matthieu d'Edesse (962—1136) avec la Continuation de Grégoire le Prêtre jusqu'en 1162». Trad. par E. Dulaurier, Paris, 1858.

⁷ «Matthieu d'Edesse, Détails historiques de la première expédition de chrétiens dans la Palestine sous l'empereur Zimisces...», Paris, 1811; X p. К у ч у к-Н о а н н е с о в, Письмо Иоанна Цимисхия к Ашоту III, «Виз. Временник», т. IX (1903), № 1—2, էջ 91—101: Ուռհայեցին այդ նամակի տեքստը հավանաբար վերցրել է Հակոբ Սանահնեցուց: Տե՛ս Լ. Խաչիկյան, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 36—37:

⁸ Ունի ֆրանսերեն ու ռուսերեն թարգմանություններ. տե՛ս «Histoire d'Arménie comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des seldjoukides par Arisdaguès de Lasdiverd», trad. par E. Prud'homme, Paris, 1864: «Повеествование вардапета Аристакеса Ластивертци». Пер. с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения К. Н. Юзбашяна, Москва, 1968:

⁹ Տե՛ս «Դիվան հայ վիժազրույթյան (Corpus Inscriptionum armenicarum)», պրակ Ա, Երևան, 1966, էջ 37, 38: Նաև В. Н. Бене-

ներկայացնում նաև Վեստ Սարգսի և Գրիգոր Մազիստրոսի թողած արձանագրությունները¹⁰:

шевич, Три ангийские надписи XI века из эпохи византийского владычества, Петербург, 1921: Ահարոն Բուլղարի և Բագարատ Վիկացու արձանագրությունները ունեն նաև Ֆրանսերեն թարգմանություն: Տե՛ս M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, 1re livraison, St.-Petersbourg, 1849, էջ 93-94:

¹⁰ Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիժական

Ահա համառոտ գծերով մեր դիտողությունները Բ. Կարայաննուպուլոսի ընդհանուր առմամբ մեծարժեք աշխատության մասին: Հայկական աղբյուրների ավելի լիակատար օգտագործումը է՛լ ավելի կրարձրացնի դրա արժեքը, և ցանկալի է, որ հեղինակը գրքի նոր հրատարակության ժամանակ այդ հարցին ավելի հանգամանորեն անդրադառնա:

Հ. ԲԱՐԹԻՅԱՆ

տարեգիր, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 17-18, 22, 23:

«ԹՈՒՐԳԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ», հատ. Գ., թարգմանություն բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի, Երևան, 1972, 258 էջ, գինը՝ 1 ա. 10 Կ.:

Հայ ժողովրդի պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար բյուզանդական, արաբական, պարսկական և այլ աղբյուրների հետ միաժամանակ կարևոր նշանակություն ունեն նաև թուրք պատմագիրների հաղորդած նյութերը:

«Թուրքական աղբյուրների» գիտական ուսումնասիրության ու թարգմանության նախաձեռնությունը (ինչպես նաև հրապարակումը) պատկանում է հանգուցյալ Ա. Խ. Սաֆրաստյանին: Այսօր ընթերցողի սեղանին դրված «Թուրքական աղբյուրների» չորրորդ հատորը, ինչպես նաև նախկինում հրապարակված երեք հատորները¹, հանդիսանում են նրա երկար տարիների արգասավոր և քրտնաջան աշխատանքի արդյունքը: Մինչ Ա. Խ. Սաֆրաստյանը հայ պատմագրության մեջ ոչ ոք հատուկ չէր դրադվել թուրքական աղբյուրները վերծանելու, թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու խնդրով: Նա առաջինն էր, որ ձեռնարկեց օսմաներենի և հատկապես արաբերենի պարսկերենի իրավական և պատմական տերմինների թարգմանության բարդ գործը:

¹ Տե՛ս Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, Երևան, 1961, հատ. Բ, Երևան, 1964; Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները, հատ. Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967: Դժբախտաբար Ա. Խ. Սաֆրաստյանին չհաջողվեց ավարտել աշխատության չորրորդ հատորը: Աշխատանքը լրացրեց և հրատարակության պատրաստեց հանգուցյալ Գ. Հ. Սանթուրջյանը:

Ա. Խ. Սաֆրաստյանը օգտագործել է օսմանյան պաշտոնական տարեգիրների և ընդհանրապես պատմագիրների երկերը: Թվով 30 թուրք պատմագիր-տարեգիրների շարքում կան, իհարկե, երկրորդական նշանակություն ունեցող պատմագիրներ, և կան այնպիսիները, որոնք մեծ տեղ են բռնում օսմանյան պետության տարեգրության մեջ: «Թուրքական աղբյուրները» մատենաշարի չորս հատորներում ընդգրկվել են թուրքական այն պատմագիր-տարեգիրների երկերը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հայ ժողովրդի պատմության համար: Անհրաժեշտ է նշել, որ Ա. Խ. Սաֆրաստյանը չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերի թարգմանությամբ, նշված հատորները բավական հարուստ նյութ են պարունակում նաև Անդրկովկասի հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Առաջին հատորում ժամանակագրական կարգով տրված են նյութեր հետևյալ տարեգիրներից՝ Փեշևի, Մուստաֆա Նալիմա, Ռաշիդ, Իսմայիլ Ասրմ էֆենդի Չելեբի Չաղե, Սուրհի, Սամի, Շաքիր, Սուլեյման Իզզի, Վասրֆ և Ահմեդ Ջեղեմ փաշա:

Ի հատորում և մասամբ էլ երկրորդ հատորում ամփոփված, քաղվածաբար արված թարգմանությունները հիմնականում վերաբերում են XVI դարի սկզբին ծավալված իրանա-թուրքական պատերազմների մանրամասն նկարագրությանը, որոնք որոշ դադարներով շարունակվեցին մինչև XVIII դ.: Այդ պատերազմները ծավալվեցին մասնավորապես հայերի բնօրրանը հանդիսացող պատմական Հայաստանի հողի վրա, որի հետևանքով մեծապես տուժեց տա-